

ՅԵՐՈՒԹԻՐԸ ԱՐՎԵՍՏՈՒՄ



**«ԼԻՐ ԱՐՔԱՅԻ» ՀԱՄԱՐ Ա.ԲԱՄ ԽՍ.ԶԱ.ՏՐՑԱՆԻ  
ԳՐԱԾ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ**

Թատերական արվեստի նկատմամբ հակում ունեցող կոմպոզիտորների մեջ դժվար է գտնել մեկին, որ գոնե մեկ անգամ անդրադարձած վիճի Շեքսպիրի թեմաների, սյուժեների, կերպարների անսպառ գանձարանին։ Համաշխարհային երաժշտական շեքսպիրականում իր ավանդն ունի նաև Արամ Խաչատրյանը։

Դեռևս իր թատերական գործունեության վաղ շրջանում Խաչատրյանը երաժշտություն է գրել Երևանի Սոմգուկյանի անվան թատրոնի «Մակրեթ» բեմադրության համար (1933), 50-ական թվականների կեսերին ամբողջ սովետական արվեստում առանձնահատուկ հակում գրաւորվեց Շեքսպիրի հումանիստական, փիլիսոփայական թատրոնի նկատմամբ։ Այս շրջանին են վերաբերում ն. Օխոպկովի «Համլետ» բեմադրությունը Մայակովսկու անվան թատրոնում, քառասնամյա ընդմիջումից հետո «Մակրեթի» վերածնունդը Փոքր թատրոնում, Ս. Յուտկվիչի «Օթելլո» կինոնկարը, մեծ դրամատորգի մի շարք ողբերգությունների և կատակերգությունների բեմադրությունները Մոուկվայի, Լենինգրադի և այլ քաղաքների թատրոններում, այդ ներկայացումների նկարահանումը (և ոչ միայն այդ, ճիշենք «Ռոմեո և Ջուլիետ» ֆիլմ-բալետը՝ Ուլանովայի մասնակցությամբ), Շեքսպիրի երկերի հիման վրա ստեղծված սովետական ֆիլմերի ֆեստիվալը, Վ. Շերալինի «Կամակոր կնոջ սանձահարումը» օպերան Ա. Մաճավարիանիի «Օթելլո» բալետը և այլն։ Այս ամբողջ վերընթաց շարժումն իր մեջ առավ նաև Խաչատրյանին։ Նա երաժշտություն գրեց Փոքր թատրոնի «Մակրեթ» բեմադրության համար (1955 թ.), նույն իսկ տարում ստեղծեց Ս. Յուտկվիչի «Օթելլո» կինոնկարի երաժշտությունը, մտադրվել էր գրել «Օթելլո» բալետը (այդ հղացումն այդպես էլ չիրագործվեց)։

Հենց նույն շրջանում, 1958-ին Խաչատրյանն իր մասնակցությունն է բերում Մասսովիստ անվան թատրոնի «Լիր արքա» բեմադրությանը<sup>1</sup>:

Թատրոնը շցանկացավ օպատործել «Լիր արքայի» երաժշտության նախկինում հայտնի նմուշները, մասնավորապես Բալակիրիի՝ արդեն զառական գարձած երաժշտությունը Անդրեարար, վերջինս չեր համապատասխանում ողբերգության բեմադրական պլանին, նրա նոր, ժամանակակից մեկնաբանությանը Մեր օրերի կոմպոզիտորին դիմելը հնարավորություն ընձեռնեց արգելն զոյտիքուն ունեցող երաժշտական կոնցեպցիային հարմարվելու փոխարեն ունենալ նոր կոնցեպցիա: Անհրաժեշտ է հենց այս տեսանկյունից էլ գնահատել Խաչատրյանի աշխատանքը, որպես պիեսի տվյալ ընթերցման և տվյալ բեմադրության բաղկացուցիչ տարր:

«Լիր արքան» նույնիսկ շերսպիրյան երկերի շարքում աշքի է ընկնում մոռնումնախարարությամբ: Լայն է «Լիր արքայում» շոշափված խնդիրների շրջանակը: Առաջատար թեմաներից մեկը՝ մարդկային հավատարմության փառարանումը, կատված է Շերսպիրի նախասիրած հնարի հետ, այն է՝ արտարինի և Էության հակադրումը: Ուստի և ողբերգության կերպարները, որ հիպերբոլիկ են, լի վիթխարի ուժով, արված են զարգացման մեջ: Դա ամենից առաջ վերաբերում է հիմնական կերպարին՝ Լիրին: «Երբ անդրագառնում ենք նրան, նախ ատելություն ենք զգում այդ թեթևարարունակալի նկատմամբ: Բայց, հետեւով դրամայի զարգացմանը, ավելի ու ավելի ենք հաշտվում նրա հետ, մարդը աեմնելով նրա մեջ, և ամեն ինչ ավարտվում է նրանով, որ զայրույթով ու այրող ատելությամբ ենք լրցվում արդեն ոչ երա հանդեպ, այլ երա և ողջ աշխարհի հետ մեկտեղ այն վայրենի, անմարդկային փիճակի նկատմամբ, որ կարող է ցոփ ու թեթևարու դարձնել անգամ Լիրի նման մարդկանց»<sup>2</sup>:

Լիրի հետ միասին, ողբերգության հիմնական կերպարներից մեկը Խեղկատակն է: Շերսպիրը հաճախ է բեմ հանում նրան: Հասարակությունից մերժված և մարդ շհամարդկող Խեղկատակն է դառնում ամենաբացահայտ ընդլայնման արտահայտիչը: «Լիր արքայում» առավել, բան մի այլ երկում, Խեղկատակը ողբերգական ֆիգուր է: Փողովոդական իմաստությունը մարմնավորող ճշմարիտ փիլիսոփա է նա: Այդ գրեթե այլարանական կերպարը ասես նպաստում է Լիրի բարոյական վերածնմանը: Իսկ երբ կատարվում է այդ, Խեղկատակը «գուրս է գալիս» պիեսից, անհետանում: Պատահական չէ որոշ հետազոտողների այն կարծիքը, թե Խեղկատակի դերը մոտ է անտիկ ողբերգության խոր-մեկնաբանի ֆունկցիային:

Խեղկատակի կերպարի հետ էլ հենց կապված են Շեքսպիրի երկի այն հիմնական փոփոխությունները, որ կատարվել են Մոսսովետի անվան թատրոնի բեմադրության մեջ: Վերջինիս հեղինակներին չի բավարարել այն, որ Խեղկատակը սոսկ այլաբանություն է: Նրանք Խեղկատակին դարձրել են գրեթե կենցաղային, ունակ, հասարակ մի կերպար և թույլ շեն տվել աննկատ հեռանալ պիհացից: Այսպես, ներկայացման գլխավոր հանգուցներից մեկը դարձել էր Խեղկատակի մահը, որ բացակայում է պիեսում (3-րդ գործողության 4-րդ պատկերից հետո՝ ըստ Շեքսպիրի): Խեղկատակի մահով ավարտվում է փոթորկի ժամանակ Լիրի թափառուցների դրամատիզմով հագեցած փուլը: Սա բեմադրության մեջ սկզբնադրյուրից հեռանալու ամենից ակներեւ փաստն է:

Մամուկն այս բեմադրությունն ընդհանուր առմամբ զնահատնց որպես «ձեռքբերումներ և կորուստներ»<sup>3</sup>, բայց Խաչատրյանի երաժշտությունը շատ բարձր գնահատականի է արժանացել: «Վիթխարի և միանգամայն ինքնուրույն է կոմպոզիտորի գերը ներկայացման մեջ, Ա. Խաչատրյանը գրել է մի ամբողջ սիմֆոնիկ սյուիտ, որ օրգանապես հյուսված է ներկայացմանը և նպաստում է գործողության ու շեքսպիրյան խոսքի ընկալմանը»<sup>4</sup>: «... Ամեն ինչ ենթարկված է գեղարվեստական միասնական լուծման, Դա վերաբերում է Ա' Ա. Գոնչարովի գեկորներին, որ հիշեցնում են հնադարյան փորագրությունները, Ա' Ա. Խաչատրյանի տաղանդավոր, ողբերգականությամբ լի երաժշտությանը»<sup>5</sup>:

Ի՞նչ է ներկայացնում Խաչատրյանի պարտիտուրը:

Երաժշտությունը բավականին մեծ տեղ է գրավում ներկայացման մեջ և օգտագործված է երկակի ձևով. այնտեղ, ուր պահանջվում է ըստ դրամատուրգի ունմարկների և այնտեղ, ուր հարմար ու անհրաժեշտ են գտել ներկայացման հեղինակները: Երաժշտության մեջ շկա ու մի ռապասարկու համար, որ խարակտերային բնույթ չունենա, լիցք շհաղորդի ներկայացմանը: Եվ, ընդհակառակը, «հեղինակի կողմից» գրեթե բոլոր համարները արդարացված են բեմականորեն (իրադրությունը պահանջում է հնչյունի միջամտություն): Այսպիսով, կատարվել է թատերական երաժշտության արտահայտչական հնարավորությունների ոլորտների փոխթափանցում և փոխադարձ հարստացում:

Խախերգանք: Խաչատրյանի երաժշտության նախերգանքն այն պլանով շի գրված, ինչպես գրում էին XIX դարի ոսւաթարական կոմպոզիտորները (Գլինկա՝ «Խշան Խոլմսկի», Բալակիրև՝ «Լիր արքա», Զայկովսկի՝ «Համելետ»): Խաչատրյանի ինտրոդուկցիան նպատակ ունի հո-

գերանորեն տրամադրել հանդիսականին, հուզական առումով նախապատրաստել նրան, նախերդանքի երաժշտական կերպարը տաղնապալիք է, մոռայ, լարված: Ողջ հնչողությունն ասես խլացված է: Մերթբնդմերթ վառ բռնկում է մի որևէ ինտոնացիա, տեմբր, հարմոնիկ աջակցում... Հնչումացին այս բարդ համակարգի մեջ կարելի է տարրերել բաս-կլարների երգեցիկ նվազի լոյն ալիքը (վերելք-անկում), բասերի վայրընթաց պիցիկատոն, փայտա փողացինների ինտոնացիաները, պղնձե փողացինների մեզմված շարագուշակ տեմբրը... Տագնապի, սպառնացող աղեաի ոնորոշ նախանշանների գգացողություն, — ահա՛ երաժշտության հարուցած տրամադրությունը Ողբերգության հիմնական բովանդակության հետ անմիջաբար կապված երաժշտապիտուն, ուր ոչ մի կոնկրետ բանով չի մատնանշվում, թե խոսքը վերաբերելու է համապես այս և ոչ թե մի այլ ողբերգության: Այս նախերդանքը երաժշտական-դրամատիկական կոնցեպցիայի առաջին օդակն է, որ հուզական միջոցներով տանում է դեպի ողբերգութական գործողությունը:

«Սպասարկու» երաժշտության շարքի մեջ մտնում են շեփորները և քայլերդերը, ուազմական երաժշտությունը, սպալատական արարողությունների հետ կապված երաժշտությունը:

... Սկսվում է առաջին գործողությունը: Բեմի ետեից երկու անդամ հնչում են շեփորները, ուալատականներին հրավիրելով թագավորական զահապահին: Մի շեփորը շարունակում է մյուսին, և երկուսը մեկտեղ կազմում են ինչ-որ ավելի ծավալուն կառուցվածքի կոչ-նախերգ: Եվ, իրոք, արքայի հայտնվելը ուղեկցվում է հանդիսավոր քայլերդ-շքերթով, որ սկիզբ է առնում հենց այդ շեփորներից, աճում ու ծավալվում: Նրա հիմքում բնկած թևման դրամատորդիական առումով շափառանց նշանակալի է: Կոմպոզիտորը դրանով ասես խորհրդանշում է լիրի ինքնակալությունը: Շեփորների վերընթաց ինտոնացիան ընկալվում է որպես կտրուկ-հրամայական, առարկություն շրնդունող ինչ-որ բան: Քայլերգն էլ համապատասխանաբար պերճաշուր է, հանդիսավոր-պաշտոնական: Իհարկե, սա լիրի բնութագրումը չէ, սակայն սառը հանդիսավոր քայլերգում կարելի է նկատել լիրի՝ ինքնահավան այդ բռնակալի բնորոշ գծերը:

Այսպիսով, կոմպոզիտորն աշխատում է ինտոնացիոն-թեմատիկ միասնության միջոցներով հասնել տրամաբանական-ամբողջական ձևի:

Վառ կերպարային խարակտերայնությունն առկա է նաև շեփորների կանչի սուր գիտոնանսներում՝ լիրին կորնվոլ դուբսի կալվածներից դուրս

Իշելուց առաջ, Զգայուն կոմպոզիտորը, որպես դրամատուրգ-համարեմադրող, գտնում է, որ անմարդկային հրամանն ազդարարող հնչունները չեն կարող ընկալվել այլ կերպ, քան իբրև «գաղանի ժանիքների կրծտոց», (Հնարավոր է, այստեղ Խաչարյանը կամա թե ակամա հետեւ է Պրոկոֆյոնի հրաշալի գյուտին՝ «Ծովուն և Ջուլիետի» դրամատուրգիայում):

Իլլուստրատիվ համարներից է նաև ճակատամարտի երաժշտությունը: Այս երաժշտական պատկերն ստեղծվում է արտահայտիչ և զարմանալի հակիրճ միջոցներով: Այստեղ առկա է ընդամենը երեք տեմբրապիթմա-ինտոնացիա: Լարային գործիքները կիսատոների վրայով սահող, անընդմեջ հնչող տասնվեցերորդականներով ստեղծում են սոսափող փոն: Փողայինները ճեղքում են զա՝ շեփորների դիսոնանսային թեմայով: Փոքր թմբուկը անողոք, հատու ոփթմով կազմակերպում է այս ամրող «եռացող» հնչողությունը: Ու թեև ճակատամարտը երաժշտությամբ ուղեկցվում է մեկ բռաբեկ ոչ ավելի, այնուամենայնիվ, նրա հուզական լարվածությունը հենց այս մի «ակնարկով» երկար է պահպանվում:

Փորորիկը, որ վրա է հասնում կիրի և նրա ուղեկիցների թափառումների պահին, ամրող ողբերգությունը բնորոշող կերպար է: Շեքսպիրի ստեղծագործության մեջ (և ոչ միայն «Էլիր արքայում») փոթորկի մոտիվը պատահական չէ: այն խորհրդանշում է հերոսների հոգեկան խոսվքը: Կիրի գիտակցական հեղաշրջումը կատարվում է հատկապես փոթորկի ուղեկցությամբ և նրա փոնի վրա: Զգացումների պոռթկումը, որ ժայթքող հրաբուխի նման ցնցում է ծերումու ողջ էությունը, խորապես հարազատ է մոլեգնած տարերքին: Շեքսպիրն անընդմեջ ընդգծում է այդ կապը:

Քենտ.

...Որքան ապրում եմ,

Այսպիսի կայծակ, այսքան գոռ որոտ,

Հողմի, անձրևի այսպիսի մըռունչ երեք չեմ հիշում,

Որ լսած լինեմ: Մարդուս բնուվթը չի կարող տոկալ

Ալշափ տառապանք, այսքան արհավիրք:

Լիր. Թընդա՞ ողջ ձայնով: Ժայթքի՞ր դու, կըրակ, տարափի՞ր, անձրև: Մըրրիկ ու անձրև, փայլակ ու կայծակ, դոք դուստրերս չեք, Չեզ չեմ պարսավում, ո՞վ անգութ տարերք, շարության համար: ...Բայց սըխալվեցի: Չեզ պետք է գոչեմ նըվաստ ծառաներ, Որ երկու շարսիրտ աղջկներիս հետ միաբանելով Պայթել եք գըլխիս՝ ձեր երկնածնունդ բոլոր ուժերով, Այս ծե՛ր գլխիս գեմ, այսշա՞փ ըսպիտակ: Ամո՞թ ձեզ, ամո՞թ: ...Հոգուս մըրրիկը

Իմ մեջ խեղզել է ամեն բպացում։  
... Այս փոթորիկը ինձ խանգարում է  
խորհել առայիկ տանշանքի մասին։


Կոմպոզիտորը սրբակիորեն արձագանքում է գրամատուրի մտա-  
հղացմանը Երաժշտական համարը նաև վերնադրել է «Մարդկային հոգի-  
ների և սրաների փոթորիկը», սրավ բնարաշվում է երաժշտական փոթորիկ  
նշանակությունը ու նկրին բռվանդակությունը և վե ճիշտ այնպես, ինչ-  
պես փոթորիկի պատկերները հանգուցային են գրամատիկական երկուու,  
այնպես էլ սիմֆոնիկ «փոթորիկը» կինարանական երաժշտական դրվագն  
է Մոսկովյանի անվան թատրոնի բնմադրության մեջ:

Սա մի ծավալուն Հյուսվածք Է՝ Նյութի շարադրման և գարգացման ընորուշ սիմֆոնիկ հնարներով, լայն շնչով։ Այսաեղ կարելի է զանազանել մի շարք ինտոնացիոն-թեմատիկ կոմպլեքսներ, որոնք տրամաբանորեն շաղկապված են միմյանց և նույնիսկ կազմում են յուրատեսակ հռամասնություն։ «Փոթորիկը» միասնական է, միաձույր Այս միասնության կերպարային հիմքը զգացումների խլառամն է, խոռվքը Դրա ինտոնացիոն, լազա-հարմոնիկ հիմքը՝ փոքրացված համահնչումնությունների և ինտերվալների մշտապես զգացվող գերակշռությունը, մեղեդային հատիկի «ներփակումը» փոքրացված օկտավացի շրջանակներում (Հնարանք, որ ընդհանրապես բնորոշ է Խաչառյանի «գլխառատ», տրաում թեմա-մեղեդիներին), կիսատոնային հաջորդականությունները, խորմաաթիգմը...

Բայց որպես ձևակաղմացին հիմնական, զլիսավոր տարր հանդես է, գալիս ոիբմբ: Երաժշտական հյուսվածքն «ստեղծում են» մի քանի ոիթմափորմուներ: Դա շաղկապող ։ ։ ։ ։ ։ ։ ոիթմախնտոնացիան է, որ կոմպոզիտորի պատկերացման մեջ անբաժան է հառաջանքի, ողբի արտահայտություններից (հետաքրքրական է նշել, որ խաչատրյանի մոտ վշահ ոչ մի երաժշտական մարմնավորում չի կարելի գտնել՝ առանց նման հառաջ-հապաղումների): Դա նաև կոմպոզիտորի սրտին անբան մոտ

սինկոպան է, որ հանդես է գալիս անկումների  
ժամանակ և իր նշանակությամբ մերձենում է հառաշ-հապաղումներին:  
Մյուս կողմից, այստեղ առկա է և դինամիզմ հաղորդող օստինատացին ֆորմովը, որ դեմքնդեմ շարժվող բասերի  
զուգորդման պայ-

Հաններում հսկայական մղիլ ուժ ունի և սովորաբար անհրաժեշտ է խաչատրյանական կումինացիաներում, տեղայի հերում: Առկա է նաև կոմպոզիտորի համար այնքան բնորոշ՝ համաշափորեն զարգացող մեղեդու առաջ մղումը, արագացումը տրիոլներով, կվարտոլներով և այլն, որոնք «շտապեցնում» են, ավելի մեծ էքսպրեսիվություն են հաղորդում նրան:



և այլն:

Ոիթմը ձև է կերտում և «...իր կենսականությամբ նույնիսկ անձնավորվում է... փորձառու ռեժիսորի նման, որ ունկնդրի տրամադրությունը վարպետորեն սևեռում է իր կամեցած պահերի վրա»<sup>6</sup>: Մետրա-ոիթմական հիմքի օգնությամբ ձև կերտելու խաչատրյանի այս ունակությունը ուսումնասիրողները նշել են բազմիցս:

Երաժշտական փոթորկի հորձանքը համահնչուն է և՛ մոլեզնած տարերքին, և՛ մարդկային հոգու բուռն ապրումներին, երաժշտությունն ուղեկցվում է հողմի ոռնոցով: Ասենք, երաժշտությունն ինքը շի խորշում պատկերավորությունից (փայտե փողայինները «սուլում» են, «ոռնում» և այլն): Բայց երաժշտության հիմնական խնդիրը հանդիսատեսի սրտում կարեկցություն, ցավ, վրդովմունք հարուցելն է, նրա ուշադրությունը զգայական միջոցներով շեքսպիրյան ամենակարող խոսքին սևեռել:

Հովկերգական երաժշտությունը ուրաքա իմաստային կովմինացիա: «Փոթորկիը» ողբերգության դրամատուրգիական կենտրոնն է, նրա գաղափարական ներվու: Այստեղից սկսվում է հերոսների հոգեկան վերածընունդը: Այդ բարդ, տանջալի ու լարված ընթացքի ավարտը կոմպոզիտորն ընկալում է որպես ստեղծագործության իմաստային բարձրակետ: Նա ուշադրությունն այս մասում կենտրոնացրել է կիրի և Գլուտերի վրա: Խաչատրյանը նրբորեն ըմբռնել է մեծ դրամատուրգի միտքը այդ երկու ծերունիների ճակատագրերի նմանության վերաբերյալ: Եվ արտահայտել է այս գուգահեռը ինքնատիպ ու համոզիլ:

Թե՛ կիրը և թե՛ Գլուտերը դժբախտ հայրեր են: Երկուսն էլ շարաշար խարվել են՝ արտաքինը էության տեղ ընդունելով երկուսն էլ դաժանորեն հատուցել են իրենց սխալի համար, բարոյական և ֆիզիկական անօրինակ տանջանքներ կրել և երկուսն էլ եկել են այն գիտակցության, որ այնուամենայնիվ աշխարհում գոյություն ունեն ճշմարիտ սեր ու հավատարմություն: Լիրն ու Գլուտերը բարոյական վերածնունդ են

ապրում ողբերգության վերջում, երկուսն էլ կործանվում են՝ իրենց հոգիները մահվանից առաջ մաքրազործելով:

Ահա այս էթիկական կատարսիսն է արտահայտել կոմպոզիտորը լուսավոր-լիրիկական երկու ինտերմեցցոյում:

Դրանցից մեկը կապված է այն պահի հետ, երբ լիբրն արթնանում է Կորդեկիալի վրանում: Հիվանդ ու անհաճար ծերունում փորձում են բուժել բնուվ, հանգստով ու... երաժշտությամբ (շեխսպիրյան շրջանում այն կարծիքը կար, թե երաժշտությամբ կարող է բուժել հոգեկան վերքերը, մոռացնել ամենախորունք վիշտն անգամ), «Մեղմ երաժշտություն» (Շեխսպիրի սեմարկն է), — ահա առաջին բանը, որ պետք է զգա արթնացող լիբրը: Այս ամրուց տեսարանում, որ ասես խաղաղ կղզյակ է նախորդած և հաչորով փոթորիկների միջև, աիրում է սրտառուշ հանգստության ողին:

Վիր. Որտե՞ղ էի ես, որտե՞ղ եմ: Ցերեկվա լո՞ւզան է:

...Կարծես ձեզ զիտեմ, այս մարդուն նույնպես.

Բայց կասկածում եմ, բանդի շգիտեմ,

Թե որտեղ եմ ես...

...Բայց ինձ թրվում է, որ այս տիկինը

իմ Կորդեկիան է:

...Արցունք թա՞ց է: Այս, թրջում է: Մի' լար, խնդրում եմ:

...Պետք է ինձ ներես,

Աղաչում եմ քեզ, մոռացի՞ր, ների՞ր. ծեր եմ, հիմար եմ:

Ամբողջ ողբերգության մեջ չկա սրանից հարմար մի տեսարան՝ պայծառ, լուսավոր, լիրիկական երաժշտության համար: Նույնքան խոր ու թրթռուն զգացումներ են արտահայտվում կույր Գրոստերի երեակայական ինքնասպանությանն ուղեկցող երաժշտության մեջ: Իրավիճակը համանըման է՝ դարձյալ հիվանդ ու տառապյալ հայրը հանդիպում է հավատարիմ զավակին: Սա նույնպես յուրովի փորձում է ապարինել հոր «մելամաղ-ձոտությունը» (միայն՝ ոչ թե երաժշտության, ինչպես Կորդեկիան, այլ ուժեղ ցնցման միջոցով):

Իրավիճակների, ապրուների նմանությունը կոմպոզիտորն ընդգծել է երաժշտությամբ: Երկու համարն էլ միատեսակ են իրենց իմաստացին հագեցմամբ՝ երկուսն էլ նպատակ ունեն լուսավորել հոգիները: Իրանց հիմնական բնույթը ոչնչով շմուցվող քնարական իդիլիան է: Նման են և արտահայտչական միջոցները: Երկու դեպքում էլ տիրապետողը մեղեդա-

յին լայն հիմքն է: Բնուվթով մեղմ, շոյող թեմաները զարմանալի երգային են, «անվերջանալի», Նրանք նույնիսկ ինտոնացիոն անորսալի նմանություն ունեն: Երկու թեման էլ տրված են ֆլեյտայի լուսավոր, մաքուր տեմբրով: Համարները նույնատիպ են նաև ձևով՝ թեմա-զարգացում-ռեպրիզ (առանց բարդ հորինվածքների կիրառման): Ռեպրիզում թեմաները փոխում են տեմբրը. մի դեպքում (Լիրի արթնանալու տեսարանում)՝ ալտերի, թավջութակների և ֆագոտների հյութեղ, լիարյոն, «միջին» ռեգիստրն է, մյուս դեպքում՝ մենանվագող ջութակի առավել պայծառ ու տաք տեմբրը: Ե՛վ այստեղ, և՛ այնտեղ մեծ դեր են խաղում արտահայտիչ նվազակցությունները, որոնք կոնտրապոնկտորնեն «ներանում» են հիմնական թեմա-մեղեղու մեջ: Ե՛վ այստեղ, և՛ այնտեղ նույրը ու զուսպ է փոնը՝ լարայինների կամ տավզի հազիվ լսելի, թրթուն նվազակցություն: Երկու պարտիտուրն էլ ծայր աստիճան հստակ են ու մի տեսակ թափանցիկ:

Այս երաժշտական «իդիլիաներն» ասես ներդաշնակության մարմնացումն են և սակավաթիվ լուսատառ, անդորր պարգևող դրվագները Խաչատրյանի սիմֆոնիկ կոնցեպցիայում:

Թաղման երածշտություն: «Լիր արքայի» պարտիտուրում մի զուգահեռ ևս գոյություն ունի: Այս անգամ արդեն նրա իմաստը մի փոքր այլ է: Երկու ոչ մեծ ռեգիստրները, երկու մահերը ներկայացումը գրեթե բաժանում են հավասար մասերի: Առաջին հատվածով՝ «Խեղկատակի մահով», ավարտվում է փոթորկի պահին լիրի և նրա ուղեկիցների թափառումների դրամատիզմով լի փուլը: Ինչպես արդեն ասացինք, թատրոնի առանձնապես շեշտում էր այս փուլի ավարտը: Երկրորդ ռեգիստրը՝ լիրի մահվան առթիվ, հնչում է ողբերգության վերջում (համապատասխան Շեքսպիրի վերջին ռեմարկի՝ «Թաղման քալերգ: Բոլորը դուրս են գնում»):

Այս երկու երաժշտական համարի նմանությունը ևս անվիճելի է: Սրանք հուզարկավորման արարողություններ են և այդ երկուսի կառուցվածքի միասնական սկզբունքի ընդհանրությունը ի հայտ է գալիս արտահայտչական տարրերում, շարադրանքի մարմնամասներում՝ պարբերության ձևը, Andante տեմպը, ինտոնացիա-լացի doloros-այնությունը, կանացի անխոս խորի բնորոշ տեմբրի օգտագործումը՝ որպես թաղման ողբի հուզական վառ գունավորում և այլն:

Արվեստագետի անսխալ զգացողությունը հանգեցրել է այն բանին, որ երկու ռեգիստրներից ստացված տպավորությունը նույնական չէ: Առաջինն ավելի վշտու է, անսահման արտուր: Երկրորդը հագեցած է դրա-

մատիկական պաթոսով և հետզհետե սկսում է դառնալ լուսավոր ու հանգարտ: Գա պատահական չէ: Շեքսափիրի ողբերգությունը նույնպես ավարտվում է հանգիստ տրամադրությամբ:

Այս տրիսուր ժամի ծանրը բեռան տակ հարկ է խոնարհվենք, ինչ որ ըզգում ենք՝ այն պիտի է ասենք.

Ամենից շատը աշխարհում տանջվեց ծերունի արքան,

Մենք, որ կրասեր ենք, այդքան չենք տեսնի, չենք ապրի այդքան:

Ուստի և ներկայացման երաժշտական ավարտակետն ավելի մասշտարային է խեղկատակի մահվան կամերային ողբի համեմատությամբ (տարրեր է հնչողության դինամիկան, գործիքավորման ամրությունը և այլն):

Խաշատրյանի պարտիառուրը թերթելուց հետո պարզ է դառնում, թե ինչու Մոսոսովեանի անվան թարառունը օգտագործել է նրան ոչ թե Բալակիրեկի կամ մի այլ կոմպոզիտորի երաժշտությունը: Այստեղ կարևորը թատերական երաժշտության օգտագործման բռն սկզբունքն է: Բալակիրեկի նախերգանքն ու անտրակտները բեմից անկախ ներկայացնում են ավարտուն երաժշտագրամատիկական կոնցեպցիա: Ավելին, դա յուրատեսակ ծրագրային սիմֆոնիկ ստեղծագործություն է Շեքսափիրի ողբերգության թեմաներով: Այդ մասին բազմիցս գրել են և՛ ինքը՝ Բալակիրեկը («...Դրաման բներեցելով, ևս խանդավառվեցի նախերգանք ստեղծելու ցանկությամբ»), և՛ նրան ողեշնչող Վ. Ստասովը («Լիրիք նախերգանքն ու անտրակտներ... Հավասարազոր են, կարելի է ասել, մի ամրող օպերայի՝ այնքան շատ բովանդակություն է ներդրված նրանց մեջ... «Լիրիք նախերգանքը հոյակատ պոեմ է: Այստեղ պատկերված է վայրենի մի դարաշրջան և կիրի կիսաբարբարոս պալատը...»<sup>8</sup>):

Բալակիրեկի նամակներում գտնում ենք գրական ժավական ժրագիր, յուրաքանչյուր երաժշտական համարի, յուրաքանչյուր թեմայի սյուժետային բացարձությունը: Վերցնենք թեկուզ սիմֆոնիկ անտրակտների ենթավերնագրերը: «2-րդ գործողության նախերգանքը, Բովանդակություն. Լիրի շար աղջիկները: Հոր անեծքը»; «3-րդ գործողության նախերգանքը: Բովանդակություն. Լիրն ու Խեղկատակը անապատում: Փոթորիկ»; «4-րդ գործողության նախերգանքը: Բովանդակություն. Լիրի արթնացումը Կորդելիայի ճամբարային վրանում՝ անգլիական ժողովրդական երգի հնչունների ներքո»; «5-րդ գործողության նախերգանքը: Բովանդակություն. ճակատամարտ: Լիրը մեռնում է Կորդելիայի դիակի մոտ: Ապոթեոզ»:

Ակներկ է, որ կոմպոզիտորը Շեքսպիրի ստեղծագործության դարդացմանը հետևել է բավականին հանգամանորեն ու հետևողականությամբ: Նման պատմողականությունը շափազանց բնորոշ է բալակիրյան խմբի կոմպոզիտորների ծրագրային սիմֆոնիզմին: Եվ հենց այդպիսի սիմֆոնիզմի օրենքներով է գրված Բալակիրյի «Լիր արքան»:

Մինչդեռ Խաչատրյանը, ժամանակակից թատերական երաժշտության սկզբունքների համաձայն, շատ ավելի սերտորեն է կապված բեմին: Նրա երաժշտությունը չի կարող գոյություն ունենալ թատրոնից, «Լիր արքայի» տվյալ բեմադրությունից անկախ, քանի որ օճանդակ բնույթ ունի: Դա, իհարկե, Խաչատրյանի երաժշտության գեղարվեստական անկատարելության կամ դրամատորգիական սահմանափակության վկայությունը չէ: Ոչ, իսկական թատերական երաժշտությունը, այսօրվա ըմբռնմամբ, լավ է հատկապես այն ժամանակ, երբ օրգանապես կապված է տվյալ բեմադրական աշխատանքին:

Եթե Բալակիրյը, ընթեցելով մեծ դրամատորգին, ոգեշնչվել է իրենով՝ Շեքսպիրով, ապա Խաչատրյանի խնդիրը եղել է շատ ավելի ուժիհուար (բառի լավագույն իմաստով): Իհարկե, սա ժանրի ըմբռնման հարց է, իսկ ինչ վերաբերում է երաժշտության գեղարվեստական արժանիքներին՝ Խաչատրյանը չի զիջում Բալակիրյին:

Այստեղից էլ մյուս բոլոր տարրերությունները, Բալակիրյը գրել է ինքնուրույն երաժշտական դրամա, ուր «Թատրոնն առանց բեմի է»: Մինչդեռ Խաչատրյանը, հավատարիմ, մնալով իր կայտն սկզբունքին, չի կրկնում բեմական կերպարները:

Եվ եթե Բալակիրյի նախերգանքը համերգային բեմերում կատարվում է նույն իրավունքներով, ինչ Զայկովսկու «Ռոմեն» և Զուլիետը» կամ «Փոթորիկը», ապա Խաչատրյանի երաժշտությունը կարող է հնչել միայն թատրոնում: Ի գեպ, Ստասովն ու Բալակիրյը այդպես էլ պատկերացրել են իրենց խնդիրը՝ «Լիր արքան» լինելու է սիմֆոնիկ ստեղծագործություն: «Լիրը՝ Պետերուրագով մեկ... Ա՛յ թե մինչև պասը կարողանայիք գոել-վերջացնել բոլոր անտրակտները... Դա, ինչ խոսք, մի այնպիսի՝ համերգ կլինի, որին ամբողջ Պետերուրագը կգա»<sup>9</sup>:

Մեր կարծիքով Բալակիրյի երաժշտության հենց այս մոնումենտալությունը, ծավալայնությունն ու ինքնուրույնությունն են պատճառ եղել, որ Մոսոսովետի անվան թատրոնն սկսել է որոնել ներկայացման երաժշտական ձևավորման ինչ-որ նոր ձևեր:

Բացի այն, որ Խաչատրյանն ստեղծել է իր գործը՝ ելնելով ռեժիսորա-բեմադրական խնդիրներից, նա շատ ավելի նպաստել է ներկայաց-

ման ժամանակակից հնչողությանը, Դա պատահական չէ, Խաչառյաններ երաժշտության լեզուն XX դարի կրակոտ, կենդանի լեզուն է։ Կոմպոզիտորին բնորոշ գծերը՝ ոճավորման լիակատար բացակայությունը, ցանկացած ժամանակաշրջանի մասին «Փնքն իրենից» գրելու եղանակը, բայց են եկել նաև այստեղ Խաչառյանի երաժշտությունից չի կարելի եղանակացնել, թե գեպքը կատարվում է Հին Բրիտանիայում։ ի դեպ, Շեքսպիրի երկրում նույնարհս պատմա-աշխարհադրական տվյալները շատ մուտքում են Բայց, դրա փոխարեն, երաժշտությունը ներքին միասնության մեջ է ողբերգության ողու հետ։

«Եիր արքայի» երաժշտությունը եկավ շեշտելու «շեքսպիրյան թեմայի» կարեռությունը Խաչառյանի ստեղծագործության մեջ, ինչպես ամեն մի կոմպոզիտորի, այնպես էլ Խաչառյանի համար Շեքսպիրին հանդիպելը և՛ բերկրալի էր, և՛ ուսանելի»

Մեծ դրամատուրգի անսպառ ժառանգությունից լուրաքանչյուր արվեստագետ ընտրում է այն, ինչ ամենից ավելի մոտ է նրա անհատականությանը, ստեղծագործական խառնվածքին։ Ճանաչելով Խաչառյանի վառ, յուրօրինակ ոճը, կարելի է կանխավ ենթադրել, որ նա Շեքսպիրից վերցրել է շքեղ զեկորատիվայնություն, մոնումենտալություն, շարադրանքի ոռմանատիկ հնչողություն, էֆեկտավոր հակադրություններ և այլն։ Այլ խոսքով՝ այն հատկանիշները, որ ներդաշնակ են կոմպոզիտորի հակումներին։ Խաչառյանին կարելի է դասել այն կոմպոզիտորների շաբաթ, ովքեր «Շեքսպիրին վերադաշնակում են ոռմանտիկական տոնայնության»։ Շարադրանքի բարձր ոճը, հուզական անմիջականությունը, զգացմունքների շիկացումը, կրբերի թափը անբաժան են նրա երաժշտությունից։ Ի հակադրություն ավելի «օրյեկտիվ», կոմպոզիտորների (Պրոկոֆիև տիպի), նա միշտ չէ, որ հետեւում է Շեքսպիրի ոճական, կերպարային, ժանրային հարստություններին։ Այսպես, օրինակ, նրա տեսագաշտից գուրս է մնացել Շեքսպիրին ընորոշ այն ոլորտը, ուր իշխում են հումորը, ֆարսը, բալագանը, ժանրային-կենցաղային տեսարանները և այլն։ Սա կոմպոզիտորի թերությունը չէ, այլ ինքնատիկավորյունը։ (Իրաք, կենցաղային հիմքն ընդհանրապես ընորոշ չէ Խաչառյանին։ Ճիշտ է, կենցաղային երաժշտության ինտոնացիաները երբեմն տեղ են գտնում նրա գործերում, բայց վառ արտահայտված ոռմանտիկական խառնվածք ունեցող մի այլ մեծ արվեստագետից՝ Զայկովսկու նման, նա նույնպես չի ձգտում կենցաղագրության։ Այժմ արդեն ոչ ոք չի զարմա-

նում, որ կոնֆլիկտի ընդհանրացված արտահայտություն ունեցող այնպիսի մի գործում, ինչպիսին Զայկովսկու «Ռոմեո և Ջուլիետ» նախերգանքն է, տեղ չի գտել շեքսպիրյան տիպական կերպարներից մեկը՝ դայակը: Մինչդեռ վերջինս ի՞նչ հյութեղությամբ և հումորով է մարմնավորված Պրոկոֆևի ստեղծագործության մեջ:

Ինչպես Զայկովսկու, այնպես էլ Խաչատրյանի գործերում բացակայում է խարակտերայնության ձգտումը, ողբերգականի և կոմիկականի, բարձր ոռմանտիկականի և կենցաղայինի, փիլիսոփայականի և ֆարսայինի զուգորդման ձգտումը, որ բնորոշ է շեքսպիրյան» կոմպոզիտորներից՝ Մուսորգսկում, Շոստակովիշին, Պրոկոֆևին:

Սակայն Խաչատրյանը Շեքսպիրից վերցրել է ոչ միայն ուսպրեզենտատիվության կամ ոռմանտիկական բարձր հնչողության արտաքին կողմերը, Կարելի է տեսնել Խաչատրյանի ներքին խոր կապը Շեքսպիրի ստեղծագործության այն ոլորտի հետ, ուր փշում է առողջ ոգին, կյանքի լիարյուն զգացողությունը, լինելիության բերկրանքը, հասարակ, հողարույր մարդկանց անսպառ կենսասիրությունը: Այլ խոսքով, շեքսպիրյան թեմաներն արձարձելիս Խաչատրյանը ենում է իր ստեղծագործությանն այնքան հարազատ հումանիզմի սկզբունքներից: Եվ ամենից առաջ՝ գեղեցիկի հաստատման այն պաթոսի միջոցով, որ կապված է նրա ստեղծագործության բուն չությանը:

Խաչատրյանի տաղանդն իր բնույթով պազիտիվ է: Եվ այս առումով կոմպոզիտորը մոտ է այնպիսի արվեստագետների, ինչպիսիք են Բորոդինը, Պրոկոֆևը և ոչ Զայկովսկին, Շոստակովիչը: Նրա ելակետը կյանքում գեղեցիկի հաստատումն է: Մուալլը, բացասականը նրա համար ոչ թե ինքնակա գոյություն է, այլ սոսկ լուսավորի, դրականի այլակերպված արտացոլումը, որպես ներդաշնակության խախտում:

Խաչատրյանի շեքսպիրյան պարտիտուրները, և սրանց շարքում «Լիր արքան», հարազատ են «Սպարտակին» և Երկրորդ սիմֆոնիային: Այստեղ բացահայտվում են կոմպոզիտորի տաղանդի այնպիսի կողմերը, ինչպես՝ սուր դրամատիզմը, ողբերգականության հակումը, թեկուզ և այդ դրամատիզմն ունի ոռմանտիկական արվեստի հատկանիշներ (ավելի շուտ «զգացմունքների դրամատիզմ» է դա, «մտքի դրամատիզմ»): Շեքսպիրի օգնությամբ Խաչատրյանը խորացավ դրամատուրգի վարպետության մեջ, թափանցեց մեծ հոգեբանի և պատմաբան-սոցիոլոգի ստեղծագործական աշխարհը, սովորեց ավելի խոր ու բազմակողմանիորեն տեսնել և արտահայտել կյանքը՝ բոլոր բարդություններով, հակադրություններով, հակասություններով:

**Եհքսպիրի և շանակությունը Խաչատրյանի ստեղծագործության համար չի սահմանափակվում նրանով, որ կոմպոզիտորը խորացավ մեծ դրամատուրգի անմահ սյուժեների, վիթխարի կերպարների ոլորտը Կատեած շկա, որ հենց շեքսպիրյան եռագրության («Օթելլո»—«Մակբեթ»—«Լիլի արքա») բնականոն հետևանքն էր այդ շրջանում ստեղծված «Սպարտակ» «խորեոգրաֆիկ սիմֆոնիան»։ Իրոք, «Սպարտակ» բազմապլան, հակագրությունների վրա կառուցված շարադրանքը՝ էֆեկտավոր դրամատիկան անտիթեսվերով, իր մեջ անուղղակիորեն արտացոլում է շեքսպիրյան դրամատուրգիայի սկզբունքները։ Եհքսպիրն ուսուցանեց Խաչատրյանին՝ ավելի խոր բնկարել կենսական կոլիզիաները, ավելի համարձակ ու վճռական ներթափանցել Հոգեբանական ապրումների բարդ ոլորտը, ավելի հստակ տեսնել սոցիալական կոնֆլիկտները։**

Դրամատիկական ներկայացման համար գրված երաժշտության կյանքը կարճատև է։ Սակայն բացառիկ գեպերում այդ կյանքը շարունակվում է համերգային բեմերի վրա։ «Լիլի արքայի» երաժշտությունը, «Դիմակահանգիստ» կամ «Վալենսիայի այրին» պիեսի համար գրված հանրածանոթ երաժշտությունից ոչ պակաս իրավունքով, արժանի է ունկնդիրների լայն շրջանների ուշադրությանը։ Երաժշտական հասարակայնությունը հետաքրքրությամբ սպասում է այն օրվան, երբ կոմպոզիտորը կիրագործի իր մտահղացումը և «Օթելլոյի», «Մակբեթի», «Լիլի արքայի» երաժշտության հիման վրա կստեղծի սիմֆոնիկ սյուիտ՝ շեքսպիրյան թևմաներով։

#### Ա Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ւ Յ Ց Ա Ւ Ն Ե Բ

1. Քեմազրություն Յու. Զավադսկու, ուժինոր Ի. Անիսիմովա-Վուլֆ, նկարիչ Ա. Գոնչարովի, Գերեբում Ն. Մորգվինով (Լիր), Ա. Բարանցե (Խեղատակ), Լ. Շապոշնիկովա (Գոների), Ի. Կարտաչովա (Խեղան), Է. Կովենսկայա (Կորդելիս) և այլք։

2. Н. А. Добролюбов. Сочинения, СПб, 1896.

3. Ю. Калашников. Находки и потери, «Советская культура», 1958,  
10 июня.

4. Անոյն տեղ։

5. Л. Петреков, Лир-Мордвинов, «Комсомольская правда», 1958, 28 сентября.

6. Б. В. Асафьев, Избранные труды, համ. I. 1952, էջ 232.

7. Переписка Балакирева с Чайковским, СПб, Изд. Циммермана, էջ 37.

8. В. Стасов, 25 лет русского искусства, Избранные сочинения, М., 1952, համ. II, էջ 548.

9. В. Стасов, Переписка Балакирева со Стасовым, ОГИЗ-Музгиз, 1935, համ. I, էջ 65.